# ՀԷՍՍԷՆԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

**ARMENISCHER KULTURVEREIN IN HESSEN e.V.**

Gegründet 1968
Gemeinnütziger Verein

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt

*Վարչութիւն/Der Vorstand*


Շրջաբերական թիվ 3 / 2014

Ֆրանկֆուրտ, 2014թ. ապրիլի 19

**Սիրելի միութենականներ և հայրենակիցներ,**

Հէսսէնի Հայ Մշակութային Միության վարչությունը սիրով Ձեր ուշադրությանն է ներկայացնում միության հետագա ծրագրերը.

2014թ. ապրիլի 24-ին, հինգշաբթի՝ ժամը 19:15



**ԳԿԽ-Ի ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ**

1915. ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 99. ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ Մայնի Ֆրանկֆուրտում: Մանրամասն տեղեկություններ՝ շուտով՝ մեր ինտերնետային կայքում՝ www.armenia.de:

**Հասցեն՝** *Paulskirche, Մայնի Ֆրանկֆուրտ:*

2014թ. մայիսի 11-ին, կիրակի՝ ժամը 12:00-ին



**ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ**

Այն կմատուցի Հոգեշնորհ Տ. Սերովբէ Վարդապետ Իսախանեանը՝ տալով օրվա պատգամը: Պատարագից հետո եկեղեցուն կից սրահում միասնաբար կնշվի

**ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՐՆԱՆ ՏՈՆԸ**

Հայ շաբաթօրյա դպրոցի աշակերտները կշնորհավորեն բոլոր մայրերին՝ իրենց պատրաստած տոնական հանդեսով, որից հետո Միության մի քանի անդամներ Ձեզ կներկայացնեն տարբեր երաժշտական համարներ:
**Հասցեն՝** *Alt-Hausen 3-5, Frankfurt/M.-Hausen:*

2014թ. մայիսի 29-ին, հինգշաբթի՝ ժամը՝ 12:00-ին



**ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ՝ նվիրված Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրմանը** (1918թ. մայիսի 28).

Եկեք միասին խորոված անենք և Հայաստանի Առաջին Հանրապետության անկախությունը տոնենք: Խնդրվում է յուրաքանչյուրին բերել իր հետ ուտելիք և խմիչք: **Հանդիպման վայրը՝** *CVJM (Christlicher Verein Junger Menschen), DARMSTADT-ARHEILGEN (Frankfurter Landstraße/ Jakob Jungstr.):*

2014թ. հունիսի 9-ին,
երկուշաբթի՝ ժամը՝ 12:00-16:30



## ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Այս տարի ևս մեր միությունը սիրով կմասնակցի իր հայկական տաղավարով և ազգային ուտեստներով՝ Հոգեգալուստի միջազգային տոնին: Խնդրում ենք ակտիվորեն մասնակցել և աջակցել մեր տաղավարին՝ Ձեր պատրաստած հայկական ուտեստներով:
**Հասցեն՝** *Dominikanerkloster, Frankfurt:*

2014թ. հունիսի 14-ին,
շաբաթ՝ ժամը՝ 17:00-ին

## ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԿԼՈՐ ՍԵՂԱՆ»-Ի ՇՈՒՐՋ

Այս օրը միասին կդիտենք մի կարճ տեսանյութ Միության երկարամյա անդամներից մեկի՝ Աչիկ Մայլեի՝ հայաստանյան «Իքս-Ֆակտոր»-ի մասնակցության վերաբերյալ, ինչից հետո Դուք կարող եք Ձեզ հետաքրքրող հարցերով («Իքս-Ֆակտոր-»ի մասին) դիմել Աչիկ Մայլեին:
**Հասցեն՝** *Միության հանդիպման վայր Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:*

2014թ. հունիսի 21-ին,
շաբաթ՝ ժամը 14:00-ին



## ԷՔՍԿՈՒՐՍԻԱ

ՀՀՄՄ-ի երիտասարդական խումբը շաբաթօրյա դպրոցի աշակերտների հետ նախաձեռնում է էքսկուրսիա դեպի Նիդդա այգում գտնվող Մինի Գոլֆի հրապարակ: Մինի գոլֆից հետո միասին կխաղանք ֆուտբոլ:

**Հասցեն՝** *Niddapark (U-Bahn-Station Römerstadt, Frankfurt)*

2014թ. հուլիսի 5-ին,
շաբաթ՝ ժամը 19:00-ին



## ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Սիրելի՛ հայրենակիցներ, սրտանց հրավիրում ենք Ձեզ «Վաղարշապատ» երգչախմբի համերգին: Մանրամասն տեղեկություններ շուտով կարող եք գտնել մեր ինտերնետային էջում՝ www.armenia.de:
**Հասցեն՝** *Saalbau Goldstein, Goldsteinstrasse 314, 60529 Frankfurt:*

2014թ. հուլիսի 13-ին,
կիրակի՝ ժամը՝ 12:00-ին

## ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Այն կմատուցի Հոգեշնորհ Տ. Սերովբէ Վարդապետ Իսախանեանը՝ տալով օրվա պատգամը: Պատարագից հետո եկեղեցուն կից սրահում տեղի կունենա՝



## ԲԱՑ ԴԱՍ

Երիտասարդական խմբից Շուշան Թումանյանը՝ մանկավարժ, գերմանագետ, Ձեր ուշադրությանը կներկայացնի զեկույց «Լեզու և ինքնություն. հայերենի դերը հայերի ինքնության կազմավորման գործընթացում» թեմայով: **Հասցեն՝** *Alt-Hausen 3-5, Frankfurt am Main*

2014թ. հուլիսի 19-ին,
շաբաթ՝ ժամը 16:00-ին

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑ



Սիրելի՛ հայրենակիցներ, այդ օրը Ձեզ հետ միասին կպատրաստենք համեղ և տարատեսակ հայկական ուտեստներ: Ուրախ կլինենք Ձեր ակտիվ մասնակցության համար: Հարցերի դեպքում սիրով կարող եք դիմել վարչությանը:
**Հասցեն՝** *Միության հանդիպման վայր. Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:*

2014թ. Սեպտեմբերի 13-ին,
շաբաթ՝ ժամը 15:30-ից

## ԱՄԱՌԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ՀԵՏՈ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Սիրելի՛ հայրենակիցներ, երկամսյա արձակուրդից հետո կրկին հանդիպում ենք Միության հանդիպման վայրում:
**Հասցեն՝** Միության հանդիպման վայր. Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

* (հնարավոր են ծրագրի փոփոխություններ, հետևեք մեր ինտերնետային կայքին՝ www.armenia.de)

------------տեղեկատվություն----------տեղեկատվություն----------տեղեկատվություն----------

**2014թ. ապրիլի 25-ին, ուրբաթ. «Գեղարդ» վանքի կանանց երգչախմբի համերգ Լորշում.** ՅՈՒՆԵՍԿՈՒ համագործակից վանքի նվերը քաղաքին՝ հիմնադրման 1250-րդ տարեդարձի կապակցությամբ:

******

**2014թ. ապրիլի 26-ին, շաբաթ.** 1915թ. ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 99-րդ տարելիցին նվիրված միջոցառում Բոխումում: Ավելի ուշ տեղեկություններ կարող եք ստանալ նաև մեր ինտերնետային կայքից՝ www.armenia.de :

******

**2014թ. մայիսի 24-ին, շաբաթ.** Համաշխարհային մեծ ճանաչում ունեցող շանսոնի երգիչ՝ Շառլ Ազնավուրի՝ իր 90 ամյակին նվիրված համերգ Festhalle Frankfurt-ում:

******

**2014թ. հունիսի 6-ին, ուրբաթ.** Բարեգործական ֆուտբոլային հանդիպում՝ Գերմանիա-Հայաստան, որը տեղի կունենա Մայնց քաղաքում: Հետագա տեղեկություններ կարող եք ստանալ մեր ինտերնետային կայքից՝ www.armenia.de :

******

Միության միջոցառումների լուսանկարները մեր ինտերնետային կայքում տեղադրելու համար. Ցանկացողները կարող են իրենց լուսանկարներն ուղարկել վարչությանը հետևյալ հասցեով՝ info@armenier-frankfurt.de: